Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

5588

Սատարակարգիչ Լուսամոյի Խմբագրութիւն

ՖԵԼԻՔՍ ԳԻԿՄԷԼ

ԻՊԵՂԻ ՆՈՐՈԴՈՒՄԸ

Թարգմ.

ՕՐ. ՆՈՒԱՐԴ ԸՂԸՇՆԵՇՆ

Դ.

ԹԻՖԼԻՍ
Տպագրատիպ Ա. Քուրթանիլանցի Նիկ. 21
1904

84
Ղ. 48

84
Դ-48

20 JAN 2006
23 SEP 2009

Հրատարակութիւն «Լումայ» ի խմբագրութեան

ՓԷԼԻՔՍ ԳԻԿՄԷԼ

ԻՂԵՂԻ ՆՈՐՈԴՈՒՄԸ

Թարգմանեց
ՕՐ. ՆՈՒԱՐԴ ԱՂԱՆԵԱՆՑ

ՍՄՍՀՄՀ ԳԱ ՀԱՅԿ. ՍՍՀ
ՍՄՄՀՄՀ ԳԱ Հ. Ա. ՄԱՍԻՍՅԱՆ
ՍՈՒԵՄՈՒՄ ՖՈՆԴ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ

Դ

Թիֆլիս
Արագատիպ Ա. Քութաթելաձէի, Նիկ. 21
1904

ՀՍՍՌ-Արմ Հ.Ս.Ռ
Ա. Մաս
Սեամ Հայկ. ...

0 3.04.2013

5588

Дозволено цензурою, Тифлисъ, 17-го Октября 1903

36773-62

ՈՒՂԵՂԻ ՆՈՐՈԳՈՒՄԸ

ՖԵԼԻՔՍ ԴԻԿՄԷԼԻ

(10002 գիշերների հեքիաթներից)

Գիշերուայ ժամի երեքն էր, երբ սուլթան Շարիերը աչքերը բաց արաւ, ձրգուեց և յօրանջեց.— քոյրիկ, — բացականչեց Դոնազարդը,— սուլթանը յօրանջում է, ուրեմն զարթեց. չէք կամենայ ձեր գեղեցիկ հեքիաթներից պատմել մեզ։—Սիրով, եթէ միայն ուղղափառների հրամայողը ցանկանում է այդ.—պատասխանեց Համեստու-

թեամբ Շեհրեզադէն։ Ուղղափառների հրամայողը ձեռքով համաձայնութեան նշան արեց և իւր սովորութեան համեմատ ձգուեց գորգի վրայ. Դոնազարդը նոյնպէս ըստ սովորութեան մատուցեց նորան անուշաբոյր ալիանը, իսկ Շեհրեզադէն միևնոյն սովորութեան հետևելով՝ սկսեց իւր պատմութիւնը։ Երեսուն տարի էր ինչ այդ սովորութիւնը կրկնուում էր ամեն օր, բայց և աննկատելի կերպով ծերացան նոքա։ Ուշադրութիւն գրաւելու համար թեթև հազալուց յետոյ Շեհրեզադէն պատմեց հետևեալը.

Իսպահանի գլխաւոր հրապարակի վրայ գտնուում էր Աբու-Հասանի դեղատունը։ Կարելի էր, իսկապէս դեղատուն անուանել այն —չգիտեմ. Աբու-Հասանը նոյն չափով էլ դեղագործ էր, ինչքան որ կախարդ. բացի դորանից հիմնուելով անցեալի վրայ՝ նա գուշակում էր ապագան և խորհրդաւոր շշնջոցով լաւացնում ամենաձանր ոսկրացաւերը, գուշակում էր սուրճի մրուրի և Շիրազ սարին՝ լուսնի ծնունդի եօթներորդ օրը՝ ձեռք բերած լոշտակի արմատի վրայ։

Ասիայի ամեն կողմից հաւաքուում էին նրա մօտ հրաշքները տեսնելու և բժշկուելու նպատակով։ Երեկոյեան դէմ Աբու-Հասանի մօտ

եկաւ մի նոր այցելու, անհաստատ շարժուածքներով, մուայլ արտաքինով, բարձրահասակ և անհանգիստ աչքերով։

—Ի՞նչ է կամենում պարոնը— հարցրեց ծեր Աբու-Հասանը։

—Ինքս էլ չգիտեմ,—պատասխանեց նորեկը—մի շատ տարօրինակ հիւանդութիւն ունիմ և եկել եմ քեզ մօտ բժշկուելու։

—Ի՞նչդ է ցաւում։

—Ի՞նչպէս ասեմ. խիղճս յուզուած է և քայքայուած. ես չեմ զանազանում բարին և չարը. մտքերիս մէջ տրամաբանութիւն չկայ. թեքւում եմ աջ ու ձախ, ինքս չգիտեմ թէ ինչու. կարճ ասեմ, ինձ թւում է որ ուղեղս կորցրել է իւր հաւասարակշռութիւնը և նորոգութիւն է պահանջում։

—Իսկ ի՞նչ է անունդ, ի՞նչ արհեստի ես։

—Անունս Ալի-Հոգօ է, իրաւագէտ խորհրդական։

—Հը՛մ, քո վիճակը շատ ծանր է, տեսնենք. նստեցէք, և ծեր Աբու-Հասանը զինուորուելով պողպատէ մուրճով և կամաց զարկելով Ալի-Հոգօի գանգին՝ բացեց ինչպէս մի հասարակ արկղ։ Ալի-Հոգօն սկսեց փռըշտալ, որովհետև թարմ օդ դիպաւ նրա ուղեղին։

—Փռ՛շտ, փռ՛շտ, կարծեմ հարբուխ եմ ստացել,—ասաց իրաւագէտ խորհրդականը ողբաձայն.

—Ոչինչ, կանցնի, այս բոպէիս կհանեմ ուղեղդ. չը շարժուես, մի բոպէի բան է։

Այս ասելով, Աբու-Հասանը վերցրեց արծաթէ շերեփը, ճիշտ այնպիսին, որով արգանակից քաշում են փրփուրը, մի անգամից հանեց Ալի-Հոգոի ամբողջ ուղեղը և զգուշութեամբ դնելով մարմարիոնէ սեղանի վրայ՝ սկսեց մանրամասն հետազօտել։ Նա ծանր շունչ էր քաշում, լեզուով շպպացնում, ուսերը վեր էր քաշում, որով պարզ արտայայտում էր իւր դժգոհութիւնը։

—Հը՛,—հարցրեց տխրութեամբ Ալի-Հոգոն։

—Այստեղ ուրիշ բան կայ, ուղեղդ ոչ թէ նորոգութիւն է պահանջում, այլ հիմնական փոփոխութիւն, և այդ վաթսուն ֆրանք կարժենայ։

—Հը՛մ, թանգ է.

—Դու գիտես, ուզում ես համաձայնուիր, ուզում ես չէ։ Ինքդ տես, այս փոքրիկ հայելին քո խղճմտանքն է. տեսնում ես ինչպէս խաւար է. պէտք է նորից փայլեցնել. բոլորովին փչացրել է դորան քո կասկածոտութիւնը. ինչ վերաբերում է ուղեղին, նա բոլորովին տրաքտրքուել է սխալ կարծիքներից, իսկ տրամաբանութիւնը բոլորովին սեղմուել է։ Երևում է որ դու ծնուել ես խելօք և ազնիւ, բայց այդ յատկութիւններդ սաստիկ վնասուել են քո փառասիրութիւնից։ Ամհասարակ ամբողջ ուղեղդ վատ դրութեան մէջ է և վեց շաբաթուայ աշխատանք է պահանջում, որպէսզի վերադարձնեմ նորան խըղճի մաքրութիւնը և խելքի կանոնաւորութիւնը. իրաւ, վաթսուն ֆրանքը այդպիսի ծանր աշխատանքի համար շատ չէ։

—Է՛հ, համաձայն եմ. վեց շաբաթից յետոյ կվերադառնամ, այնուամենայնիւ 60 ֆրանքը շատ է, կարելի էր վերցնել գէթ 50։

—Երևում է, որ բոլորովին խիղճ չունես—ասաց Աբու-Հասանը և դուռը փակեց։

—

Անցաւ վեց շաբաթ, Ալի Հոգոի ուղեղը փայլում էր նորի պէս. Աբու-Հասանը ոչինչ չխնայեց, նա արեց մինչև անգամ այն, ինչ որ չէր էլ խոստացել։ Ուղեղից հանեց մի քանի ցնորքներ, իսկ խղճի հայելին այնպէս յղկեց, որ փայլում էր փիլիսոփային յատուկ առաքինութիւններով։ Աբու-Հասանը ուրախանում էր իւր արհեստով և անհամբեր սպա-

ՀՍՍՌ-Արմ ССР

սում էր իւր հիւանդին. բայց Ալի-Հոգոն չեկաւ նշանակած օրը։

Այսպէս անցաւ ութ տարի։ Աբու-Հասանի համբերութիւնը կորաւ. Ալի-Հոգոի ուղեղը նրան ցաւ էր պատճառում և վճռեց ծախել, մանաւանդ որ ուզում էր գործից քաշուել և հանգստանալ։ Գնող էլ գտնուեց, մի ինչ որ բարձրաստիճան մարդ։ Յանկարծ մի անգամ վերջալոյսին մէկը դուռը ծեծեց և Աբու-Հասանը տեսաւ իւր առաջ իւր հին յաճախորդ Աբու-Հոգոին։

—Ուշացայ, ներիր, խնդրեմ։

—Շատ չես ուշացել, միայն 8 տարի, պարոն, բայց լաւ ժամանակ ես գալիս, ես վճռել էի ուղեղդ ծախել։

—Չէ, մի ծախի, ինձ համար թանգ է իմ ուղեղը և եկայ յետ ստանալու։

—Ներողութիւն համարձակութեանս համար, ինչո՞ւ այդքան ուշացաք. եթէ փողի համար էր՝ կարող էի թողնել ձեզ վրայ իբրև պարտք։

—Ոչ, դրա համար չէ. ես ձեզ կասեմ, թէ բանն ինչումն էր։ Թողնելով ձեզ մօտ ուղեղս, սկսեցի պարապել քաղաքական գործերով, պատգամաւոր դառայ, բարձր պաշտօններ ստացայ և վերջապէս հասայ բարձր

դիրքի. և ես մտածեցի, որ նոր պաշտօնիս մէջ խիղճը օգուտ չէր բերի ինձ, մինչև անգամ վնաս կտար. իսկ խելքը 'ի հարկէ, բոլորովին աւելորդ բան էր։

—Հա, հա, հա, վատ չես մտածել, հապա այժմ։

—Շահը մեզ արձակեց պաշտօնից և ես առանց գործի մնացի. այժմ վերադառնալով առաջուայ մասնաւոր կեանքին, մտածեցի որ թէպէտ թագաւորական ծառայութեան և գործերի ժամանակ, որոնք իմ կարծիքով մի փչացած ձու չարժեն, կարող էի գործել առանց խելքի և խղճի, այժմ իմ սեփհական գործերի համար, որոնք ինձ համար շատ թանգ արժեն, ինձ անհրաժեշտ կլինին թէ մէկը և թէ միւսը... և ես եկայ քեզ մօտ ուղեղս ստանալու. ահա փողերը, ստացիր։

—Նստիր—ասաց Աբու-Հասանը և կրկին վերցնելով մուրճն ու շերեփը, գանգը բաց արեց, մաքրեց ուղեղի վրայի թոզը և զետեղեց առաջուայ տեղը։

—Պատրաստ է. ինչպէս ես զգում քեզ։

—Հրաշալի. գլուխս մի փոքր ծանր է և հարբուխ ունիմ։

—Կանցնի, կսովորես։

—Ախ, անտանելի է։

— Ի՞նչը։

— Խիղճս ալեկոծուում գրգռում և յանդիմանում է ինձ։

— Շատ հասկանալի է. նա յիշեցնում է քո անցեալը. բացի դորանից ուղեղի մէջ ես նոր զսպանակ եմ դրել. հաւատացած եղիր, որ մի փոքր ժամանակից յետոյ կհանգստանայ։

— Ի՜նչ զանազանութիւն. անցեալ անգամ ասացի քեզ, որ ինձ մի բան պակասում է, իսկ այժմ ինձ թւում է, որ մէջս ինչ որ մի աւելորդ բան կայ։

—

Այդ միջոցին լոյսի ճառագայթը ներս թափանցեց սենեակը և մեծ սուլթան Շահրիարը նկատեց, որ ժամանակ է պատմութիւնն աւարտելու, որովհետև պէտք է գործի գնար։ Նա աւելացրեց՝ թէ երկար տարիների փորձերից յայտնի է իրան, որ իւր նախարարապետները նոյնպէս յաճախ կարիք ունին Աբու-Հասանի օգնութեան դիմելու։

ՀՍՍՌ-Արմ ССР

ՀՀ Ազգային գրադարան
NL0169656

Հ
Գ

Օր. Նուարդ Աղանեանցի թարգմանութիւնները.

1. Սև հացեր. բ. տպ. . . 5 կ.
2. Ապուշը. Ժ. Էսպարբի . . 5 կ.
3. Դիմումին Ժ. Լբմեարի . . 5 կ.
4. Ուղեղի նորոգումը. Գ. Դիկմէլի. 5 կ.

ԳԻՆՆ Է 5 ԿՈՊ

վաճառւում է «Լումայի» խմբագրատանը